ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 30-ԱՄՅԱԿԻՆ

1975 թ. ապրիլի 30-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Նախագահության և ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի գիտական նստաշրջանը՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած փայլուն հաղթանակի 30-ամյակին։ Նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցում էին գիտնականներ և պատերազմի վետերաններ, ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ասաց, որ լենինյան կուսակցության իմաստուն ղեկավարության շնորհիվ ֆաշիզմի դեմ մեր ժողովրդի պայքարը պսակվեց մեծ հաղթանակով։ Այդ պայքարում հաղթեց մեր ժողովրդի անսահման հայրենասիրությունը, համախմբվածությունը, անկոտրում կամքը և հավատը պայծառ ապագայի նկատմամբ։

Վ. Հ. Համբարձումյանը նշեց, որ մեծ հաղթանակը շրջադարձային կետ էր համայն մարդկության պատմության մեջ։ Պատերազմից հետո Սովետական Միությունը դադարեց աշխարհում փաստորեն միակ սոցիալիստական պետությունը լինելուց՝ ծնունդ առավ սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։ Ամրապնդվեց կոմունիստական և բանվորական շարժումն ամբողջ աշխարհում, փլուզվեց գաղութային սիստեմը և բազմաթիվ ժողովուրդներ կանգնեցին ազգային ինքնուրույն զարգացման ուղու վրա։ Վերջում Վ. Հ. Համբարձումյանը շեշտեց, որ ՍՍՀՄ-ը այսօր ևս հանդիսանում է այն հիմնաքարը, որի վրա հենվում են ողջ առաջավոր մարդկությունը և սոցիալիզմի ուժերը։

«Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի պատմական նշանակությունը» զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ա. Դալոյանը։

Նա ասաց, որ Հայրենական մեծ պատերազմը մեր երկրի կյանքում ամենադժվարին փորձություններից մեկն էր, որից սովետական ժողովուրդը պատվով դուրս եկավ։ Դրանով իսկ նա պաշտպանեց ոչ միայն մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը, այլև հանգեցրեց ֆաշիզմի քաղաքական, գաղափարական և ռազմական կրախին ու ջախջախմանը։ Հայրենական մեծ պատերազմը պատմության մեջ նախադեպ չունեցող գոտեմարտ էր ոչ թե երկու պետությունների, այլ իմպերիալիզմի առավել ռեակցիոն ու ագրեսիվ ուժերի և սոցիալիզմի միջև։ Նրա ելքից էր կախված ինչպես սովետական ժողովրդի ու սոցիալիզմի ճակատագիրը, այնպես էլ համաշխարհային քաղաքակրթության հետագա զարգացման ուղիների հարցը։

Սովետական ժողովրդի հաղթանակի կազմակերպիչն ու ոգեշնչողը փառապանծ լենինյան կոմունիստական կուսակցությունն է, որի ղեկավարությամբ թիկունքն ու ճակատը վերածվեցին ռազմական միասնական ճամբարի։

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն խոսեց Հայրենական մեծ պատերազմում մեր ժողովրդի տարած հաղթանակի աղբյուրների, արդի միջազգային լարվածության թուլացման, առաջադիմության, սոցիալիզմի ու դեմոկրատիայի ուժերի ամրապնդման գործում մեծ հաղթանակի ունեցած նշանակության մասին։

Պատմական գիտությունների դոկտոր Վ. Ն. Ներկարարյանի զեկուցման թեման էր «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին»։ Նա ասաց, որ սովետական հայրենիքի պաշտպանության և հիտլերյան Գերմանիայի ջախջախման գործում սովետական մյուս հանրապետությունների հետ իր արժանի ավանդը է ներդրել նաև Սովետական Հայաստանը։ Պատերազմին մասնակցեցին հայ ժողովրդի 500 հազար զավակներ։ Հայկական ազգային գիվիդիաները փայլուն էջեր գրեցին մեծ հայրենականի տարեգրության մեջ։ Բազմաթիվ հայորդիներ ֆաշիզմի դեմ պայքարում էին պարտիզանական ջոկատներում և դիմադրական այլ կազմակերպություններում։

Ամբողջ պատերազմի ընթացքում Սովետական Հայաստանը եղբայրական մյուս հանրապետությունների հետ ամեն ինչ անում էր ռազ-

մաճակատ նոր համայրումներ, զենք ու հանդերձանք և մթերքներ ուղարկելու համար։ Պատերազմի տարիներին Հայաստանում թողարկվում էր մոտ 300 տեսակի սաղմական արտադրանք։ Հայ ժողովուրդը Սովետական Միության ամեն մի թիզ հողը համարել է Հայաստանի հողի անբաժանելի մասը, նրա ազատության մեջ տեսել իր հանրապետության պաշտպանության միակ երաշխիքը։ Այդպես են մտածել նաև սովետական մյուս ժողովուրդները, և հենց դա է մեծ հաղթանակի կարևոր նախապայմաններից մեկը։

Նստաշրջանում եզրափակման խոսք ասաց Վ. Հ. Համբարձումյանը։